

## ՀԱՅՈՑ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՑ ԱՆՎԱՆԱՓՈՒՄԱՆ ՁԵՎԵՐԸ

### ՋՈՒԼԻԵՏԱ ԵՍԱՅԱՆ

Տեղանվանաբանությունը կամ տոպոնիմիկան անվանաբանության (օնոմաստիկա) մի բաժինն է, որն ուսումնասիրում է տեղանունները, քննում նրանց իմաստը, ծագումը, կառուցվածքը, ինչպես նաև նրանց տարածման արեալները: Տեղանվանաբանությունն արժեքավոր նյութ է տալիս պատմության, աշխարհագրության, հատկապես բնակչության աշխարհագրության վերաբերյալ, օգնում է վերականգնելու հնագույն ցեղերի, տոհմերի և առհասարակ որևէ ժողովրդի առաջացման ու ձևավորման, տարաբնակեցման սահմանները, ուրվագծելու անցյալում լեզուների տարածման շրջանները, նախկին, ինչպես նաև ներկա առևտրական ու տարանցիկ ճանապարհների աշխարհագրությունը, ժողովուրդների վերաբնակեցման ուղիները, պատկերացում տալիս երկրների ու ժողովուրդների շփման, նրանց ունեցած քաղաքակրթության մակարդակի, ինչպես նաև տնտեսական ու մշակութային կենտրոնների մասին:

Արտացոլելով ազգային առանձնահատկություններ՝ տեղանունները պարունակում են տեղանվան մասին աշխարհագրական, պատմական, լեզվաբանական տեղեկատվական տվյալներ, ինչպես նաև տեղեկություններ տվյալ տարածքում ապրող ժողովուրդների ժամանակաշրջանի, զարգացածության և նրանց զբաղմունքի մասին:

Ժամանակագրական առումով հայկական տեղանունները հիշատակվում են սեպագիր շրջանից սկսած (օր.՝ Ամոջ, Առեղի) և հասնում մինչև մեր օրերը: Դրանք հիշատակվում են ուրարտական ժամանակաշրջանում (օր.՝ Մենուախինիլի քաղաք, Լուերուխի երկրամաս), միջնադարում (օր.՝ Ազռավաքար ամրոց՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, Հաղարծին վանք՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում), նոր շրջանում (օր.՝ Անձակ գյուղ՝ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Կաղզվան քաղաք՝ Կարսի մարզում), նորագույն շրջանում (օր.՝ Չարենցավան քաղաք՝ ՀՀ Կոտայքի մարզում, Անտառաշեն գյուղ՝ ՀՀ Լոռու մարզում):

Հայաստանը, գտնվելով Արևմուտք-Արևելք տարանցիկ հատվածում, բազմիցս ենթարկվել է օտարների ներխուժման, ինչի հետևանքով կատարվել են նոր անվանափոխություններ, և, ըստ այդմ, Հայաստանի տարածքում առաջացել է տեղանունների ավելի քան տասը շերտ՝ հայկական-հայաստական-ուրարտական, ասուրա-բաբելական, խեթա-խուրիական, հին պարսկական, հռոմեա-բյուզանդական, արաբական, թուրքական, ռուսական, վրացական, քրդական, ադրբեջանական:

Ուրարտական թագավոր «Ռուսա Բ-ի (մ.թ.ա. 685-645 թթ.) Ջվարթնոցում հայտնաբերված արձանագրությունում Սևանա լճից դուրս եկող Հրազդան գետը անվանված է Իլդարունի, որի առաջին **Իլդ** բաղադրիչը նշանակում է «գետ», իսկ երկրորդը՝ **արուն**-ը, նշանակում է ծով (խե-

թերեմ). ուրեմն և Իլդարունի նշանակում է «**ծովագետ**»: Հրազդան բառի **դան** բաղադրիչը նշանակում է գետ: Հնդեվրոպական լեզվում գոյություն է ունեցել *juro*=ջուր բառը, որ տարբեր լեզուներում ունեցել է ջուր, անձրև, ճահիճ, լիճ նշանակությունը: **Հրազ**-ը որոշ լեզուներում հանդես է գալիս յուրես, յուրիոս, յուրա ձևերով: Եվ կասկած չի հարուցում Հրազդան գետի առաջին բաղադրիչի՝ **հրազ**-ի առաջացումը **յուրաս-հուրաս** անցումով, որը միանգամայն բացատրելի է հայերենի հնչյունական օրինաչափություններով: Եվ իրանական ազդեցության հետևանքով դարձել է **հրազդան**, որը նույնպես նշանակում է «**ծովագետ**»<sup>1</sup>: Այսինքն՝ հնագույն **Իլդարունի** և ներկայիս **Հրազդան** տեղանուններն իմաստով նույնական են:

Հայոց տեղանունների անաղարտությունը պահպանվեց մինչև օտարների մուտքը Հայաստան, որից հետո գործածությունից դուրս են մղվել տիպիկ հայկական բյուրավոր անուններ, որոնք տարբեր ժամանակներում այլափոխությունների ենթարկվելով՝ աղավաղվել կամ փոխարինվել են օտարահունչ, երբեմն էլ՝ հորինված անուններով: Հին հայկական տեղանունների անվանափոխումների մեծ մասը հիմնականում կատարվել է թուրքերի կողմից՝ հատկապես 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո, երբ, որպես ցեղասպանական ծրագրի հերթական քայլ, ձեռնամուխ եղան վերացնելու հայկական տեղանունները: Հայոց տեղանունների համատարած անվանափոխությունները անց էին կացվում համաձայն վաղօրոք մշակված և գործածության մեջ դրված հրամանագրի<sup>2</sup>: Վերջինիս համաձայն՝ անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում ազատվել իրենց համար օտար անվանումներից՝ հստակ գիտակցելով, որ դրանց մեծ մասը հայկական էր: Հայկական տեղանունները պետք է վերանվանվեին թուրքական պետական ու հասարակական գործիչների, Թուրքիան գովերգող անվանի մարդկանց անուններով, կամ պետք է հաշվի առնվեին տեղանվան աշխարհագրական դիրքը, տվյալ տարածքում աճող բերքը, որով հայտնի էր տվյալ շրջանը և այլ հանգամանքներ: Հրամանագրում նշվում է, որ այդ անունները պետք է անպայման հաջող ընտրվեն, հակառակ դեպքում վտանգ կարող է լինել, որ գործածության մեջ կմնան դրանց նախնական՝ հայկական, անունները: Ու սկսվեց հիմնովին կողոպտված, ամայացած, ավերված կամ կիսավեր, երբեմն էլ հրկիզված՝ հայ ժողովրդի բնօրրանի բնակավայրերի, վանքերի, եկեղեցիների, մատուռների, անառիկ բերդերի ու ամրոցների, վարչական ու ֆիզիկական բյուրավոր տեղանունների անվանափոխման մի ծավալուն գործընթաց, որի հետևանքով Հայոց բնօրրանը՝ Արևմտյան Հայաստանը, և Կիլիկիայի հայկական պետության տարածքը ողողվեց թուրքական կամ կիսաթուրքական անվանումներով: Ահա թե ինչ է գրված «Հայկական սովետական հանրագիտարան»-ում Արևմտյան Հայաստան անվանումը վերացնելու և նրա փոխարեն Անատոլիա (հունարեն նշանակում է արևելք, արևածագ) անունը շրջանառության մեջ դնելու մասին. «1923-ից թուրքական գրականության մեջ Ա[նատոլիա] են անվանում ողջ Ասիական Թուրքիան՝ ներառյալ Արևմտյան Հայաստա-

<sup>1</sup> **Յ. Կարազեոզեան**, Սեպագիր տեղանուններ, հ. 1, Եր., 1998, էջ 221:

<sup>2</sup> Այդ հրամանագրի առաջին անգամ հայերեն թարգմանված օրինակը տես **Լ. Սահակյան**, Տեղանունների թուրքականացումն Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ-Վրոդ, 2010, էջ 33-35:

ըն և Քրդստանը, որով և խեղաթյուրվել է այդ տերմինի աշխարհագրական բովանդակությունը»<sup>3</sup>: Այժմ, ըստ նրանց, Անադոլու:

Մեթոդաբար իրականացվող անվանափոխության գործընթացը փոքր-ինչ դանդաղել է միայն երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, որից հետո դարձյալ նոր թափ է առել: Ռա հանգեցրեց նրան, որ եթե Թուրքիայի 1923-1930-ական թթ. քարտեզներում նշանակված տեղանուններում դեռևս որոշ չափով պահպանվում էին հայկական արմատները, ապա 1970-ական թվականների քարտեզներում դրանք գրեթե բացակայում են: Նպատակադրված ու հետևողականորեն իրագործելով պետական հրամանագիրը՝ 2010 թ. թուրքերն արդեն անվանափոխել էին Թուրքիայի գյուղական բնակավայրերի 1/3-ից ավելին:

Հր. Աճառյանն այն կարծիքն է հայտնում, որ հայոց տեղանունների՝ թուրքերենի փոխելու գործընթացում նկատվում է հետաքրքիր մի երևույթ, այն է՝ այդ անվանափոխությունները կատարելիս թուրքերը երբեմն անդրադարձել են հայերենին: Օրինակ՝ Թեքիր անվան մասին ասում է, որ այն նշանակում է «արքայաձուկ» և գտնում է, որ «այս բառը թուրքերենը փոխ է առած հայերեն թագաւոր բառէն, իսկ հայերը փոփոխեալ ձևով ետ առած են երկրորդ անգամ՝ իբր թուրքերէն բառ»<sup>4</sup>: Եվ իսկապես՝ Կիլիկիայի Ջեյթուն գավառակում՝ Պիռամոս կամ Ջահան գետի ավազանում, կա Թագավորի ջուր անվամբ գետակ, որը կոչվել է նաև Թեքիրի ջուր: Ավելին՝ նույն գավառակում՝ Կանչի գյուղից ոչ հեռու, տարածվում է Թագավորի լեռնաշղթան, որը նույնպես կոչվել է Թեքիր: Նույն բանը կատարվել է նաև թուրքերեն «յաղ», որ հայերեն նշանակում է «յուղ», արմատով կազմված տեղանունների դեպքում: Հր. Աճառյանն այս մասին գրում է. «Յաղ... թուրքերէն բառը փոխառեալ է հայերէն եղ ձևէն և յետոյ իր փոխուած ձևով վերադարձած է հայերէնի»<sup>5</sup>: Նրա կարծիքով՝ Շենլիք բառը, որ նշանակում է ուրախություն, հանդես, զվարթ մարդ կամ տեղ, նույնպես ունի հայկական ծագում. «Շենլիք, շեյնլիգ... թուրք բառը կը ծագի հայ. շէն բառէն, իսկ իկ տաճկական մասնիկ է»<sup>6</sup>:

Հայկական տեղանունների թուրքականացման սկզբունքների մասին պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում ներկայացնել դրանցից առավել կարևորները:

1) *Անվանափոխում թարգմանության ճանապարհով: Աշխարհագրական օբյեկտների անուններում առավել հաճախ գործածվող բառերից* ներքինը դարձրել են **աշաղի**, վերինը՝ **սուֆլա**, միջինը՝ **օրթա**, նորը՝ **ենի** կամ **թագա**, հինը՝ **քյոհնա**, սպիտակը՝ **աղ**, սևը՝ **կարա**, կարմիրը՝ **կզըլ (դզըլ)**, գյուղը՝ **քենդ** կամ **քոյ**, եկեղեցին՝ **քիլիսա**: Աղբյուրը թարգմանել են **բուլաղ**, գետը և ջուրը՝ **չայ** և **սու**, լեռն ու սարը՝ **դաղ** ու **թափա**, ծորը՝ **դարա** կամ **դարասի**, բացատը՝ **թալա** և այլն: Վերջիններս շատ հաճախ պարզապես կացրել են հայկական տեղանուններին և Հայկական լեռնաշխարհն անհարկի լցրել շինծու տեղանուններով: Պարզ անունները նրանք

<sup>3</sup> «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, եր., 1974, էջ 373:

<sup>4</sup> Հր. Աճառյան, Թուրքերենի փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. 9, Մոսկուայ-Վաղարշապատ, 1902, էջ 130:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 243:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 260:

թարգմանել են բառացի. այսպես՝ Ծովք լիճը դարձրել են Գյուլջիկ, Արեգունի լեռը՝ Գյունեյ, Աստղիկ գետը՝ Յըլտըզ, Ագարակը՝ Չիվլիկ և այլն:

2) *Բարդ տեղանունների դեպքում թարգմանվել են արմատները:* Ըստ այդմ՝ Ծակքարը թարգմանվել է Դալիկդաշ (դալիկ=ծակ, դաշ=քար), Ձկնագետը՝ Բալըխայ (բալըխ=ծուկ, չայ=գետ), Խոզաղբյուրը՝ Դոնգուզբուլաղ\* (դոնգուզ=խոզ, բուլաղ=աղբյուր), Արջածորը՝ Այիդարասի (այի=արջ, դարասի=ծոր), Մոխրաբլուրը՝ Քյուլթափա (քյուլ=մոխիր, թափա=բլուր), Ծաղկածորը՝ Դարաչիչազ (դարա=ծոր, չիչազ=ծաղիկ), Կամրջագեղը՝ Քյոփրիքյոյ (քյոփրիք=կամուրջ, քյոյ=գյուղ): Վերջինիս դիմաց՝ Երասխ (Արաքս) գետի վրա, նրա ձախակողմյան Մուրց վտակի գետախառնուրդում, Վերին Բասենի շրջանում, Վաղարշակ Բ Արշակունի թագավորի կողմից 2-րդ դարում կառուցվել է 7 կամար ունեցող և մինչև օրս կանգուն ու գործող հոյակապ մի կամուրջ՝ Յովվի կամուրջ անվամբ, որը թուրքերը թարգմանաբար դարձրել են Չոբան քյոփրի (չոբան=հովիվ, քյոփրի=կամուրջ):

3) *Հայկական բարդ տեղանունների ոչ լրիվ թարգմանություն:* Այսպես՝ Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքի մոտ գտնվող Երկար Խաչ գյուղի անվան մեջ բարեբախտաբար թարգմանվել է միայն «Երկարը»՝ ուզուն և դարձել Ուզուն Խաչ: Խաչի աղբյուր գյուղատեղին անվանել են Խաչբուլաղ (բուլաղ=աղբյուր) և այդ գյուղատեղիում գտնվող Խաչաղբյուրի վանքը ևս դարձրել են Խաչբուլաղի վանք, իսկ Խաչ լեռը՝ Խաչդաղ: Պատմական Փոքր Հայքի Մալաթիա քաղաքի մոտ գտնվող Վանքասար լեռը անվանել են Վանքիդաղ (սար=դաղ), Էրզրումի (Կարնո) նահանգի Թորթումի գավառակում գտնվող Փոքր Խեչո տեղանվան մեջ թարգմանել են «Փոքրը» և դարձրել Քյուլչուկ Խեչո:

4) *Տեղանունների բազմացում: Թարգմանությանը զուգահեռ երբեմն մեկ աշխարհագրական օբյեկտի տվել են թուրքական մի քանի անուն:* Օրինակ՝ Կիլիկիայում, Ադանայի նահանգի Մարաշի գավառում, Մարաշ քաղաքից 25 կմ արևմուտք, Ջահան կամ Պիռամոս գետի ու նրա աջակողմյան Կապան վտակի միջև գտնվող և 400 տուն բնակիչ ունեցող հայաբնակ Մեծ գյուղի անունը նրանք թարգմանել են Բոյուքքյոյ (բոյուք=մեծ, քյոյ=գյուղ), ինչպես նաև գյուղին տվել են Խրիստիանքյոյ (խրիստիան = քրիստոնյա, քյոյ=գյուղ) անվանումը:

5) *Ոչ հիմնական անվան թարգմանություն և ամրագրում: Անվանափոխումների ժամանակ, եթե աշխարհագրական օբյեկտի անունը թարգմանական դժվարություններ է հարուցել, ապա նրանք թարգմանել են անվան մեկ այլ տարբերակ և այդ ձևով վերանվանել այն:* Այսպես՝ Հայկական պար լեռնաշղթայում գտնվող Գայլատու լիճը կամ Ձկնաբեր ծովակը անվանափոխելիս թարգմանել են տարբերակներից 2-րդը և այն կոչել Բալըխգյոլ (բալըխ=ծուկ, գյոլ=լիճ): Բալըխայ անվամբ են վերանվանել նաև լճից սկիզբ առնող Ձկնագետ (հնում՝ Առուն) կոչվող գետը: Նույն ձևով են փոխել նաև Արածանի (Արևելյան Եփրատ) գետի ձախակողմյան Մեղրագետ վտակի անունը. թարգմանել են նրա անվան Սև ջուր տարբերակը (ո-

---

\* Ի դեպ՝ խոզ արմատով կազմված թուրքերեն տեղանունը պարզեիպարզ ի ցույց է հանում թուրքական կեղծարարությունը, քանզի որպես մահմեդական ժողովուրդ թուրքերը երբեք խոզապահությամբ չեն զբաղվել, ուստի չէին կարող ունենալ խոզաղբյուր տեղանուն:

րը տրվել է գետին նրա ջրի մուգ գույնի պատճառով) ու այն անվանակոչել՝ Կարասու (կարա=սև, սու=ջուր):

6) *Տեղանունների լրիվ կամ մասնակի աղավաղում, հարմարեցում իրենց արտասանությանը:* Արևմտյան Հայաստանի Երզրունի (Կարնո) նահանգի Խնուսի գավառակում գտնվող Խաչալույս գյուղը դարձրել են Խալչաուշ, Բյուրակն-Մնծուրյան լեռնաշղթայում գտնվող Սուրբ Լույս լեռան անունը՝ Սուլպիս կամ Սիլպուս, Երզնկա քաղաքի մոտ գտնվող Սուրբ Գրիգոր լեռնաշղթան՝ Սըբնգոր, Վանի նահանգի հայկական Ծառնոց գյուղանունը՝ Սառնոս, Երզրունի նահանգի Ներքին Բագառիճ գյուղը՝ Փեքերիջ, Պարտեզը՝ Փերթուզ, Գյուղածորը՝ Գյուլեսուր, Բերդակը՝ Փերթագ, Չկնաջուրը՝ Սըկնասուր, ինքնապաշտպանական հերոսական կռիվներ մղած և իրավամբ «Քաջերի բույն» անուն վաստակած Չմշկածագ գյուղաքաղաքի անունը դարձրել են Չիմիշգեզեք: Բոլոր Կապան տեղանունները դարձրել են Քեբան: Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Չմշկածագի գավառակում գտնվող Բագաբուն գյուղանունը դարձրել են Փագափին: Կարսի մարզի Կարզվանի օկրուգի Նախիջևանի տեղամասում, Կարզվան գյուղաքաղաքից 33 կմ հյուսիս-արևելք Տեկոր գյուղանունը դարձրել են Դիգուր: Վանի նահանգում Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Արճեշ քաղաքի անունը դարձրել են Էրջիշ: Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Տերիկ քաղաքը, որը մեծ դիմադրություն էր ցույց տվել բյուզանդական զորքերին՝ արտասանական աղավաղմամբ դարձրել են Դիվրիզ կամ Դիվրիզի: Կիլիկիայի հայկական պետության Բարձրբերդ գավառին սահմանակից Ցախուտ գավառի անունը աղավաղել են Չախրտ ձևով: Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառում, Նարեկավանքի մոտակայքում գտնվող և հայոց գրչության հայտնի կենտրոն Տշող գյուղանունը դարձրել են Դըշախ: Կիլիկիայում, Ադանայի նահանգի Մարաշի գավառում, Մարաշ քաղաքից հյուսիս-արևելք գտնվող Կամուրջ գյուղի անունը դարձրել են Քերմուշ և այլն:

*Տեղանունների հայկական իմաստը վերացնելու նպատակով երբեմն փոխել են տեղանվան թեկուզ մեկ տառը:* Օրինակ՝ Խաչի ձոր գյուղատեղին դարձրել են Խեչի ձոր: Մեկ այլ դեպքում անվան մեջ անփոփոխ են թողել միայն որոշ տառեր: Այսպես՝ Իլկասարը դարձրել են Իլանդաղ: Նույն ճակատագրին է արժանացել նաև Մուշի գավառի Կոփ (Խաչլվա) լճից հարավ-արևելք ընկած հին հայկական նշանավոր Շաղագու գյուղանունը, որը դարձրել են Շեխյաղուբ կամ Շեխյաղուբ (շեխ նշանակում է մահմեդական վանական, իսկ յաղուբը անձնանուն է): Կիլիկիայի Ադանայի նահանգի Մարաշի գավառում, Ջեթուն գյուղաքաղաքից հարավ-արևելք գտնվող Կիլիկիայի հայկական թագավորության շրջանից որպես արքեպիսկոպոսանիստ հիշատակվող Արեգին բնակավայրը, որի անունից թուրքերը անփոփոխ են թողել անվան միայն առաջին՝ «ա» տառն ու այն վերանվանել Ալաբաշ, որ նշանակում է «զնդի գլուխ»:

*Մեկ այլ դեպքում հակառակ երևույթն է:* Երբ հայկական տեղանուններին ոչ թե ավելացրել, այլ նրանցից տառ պակասեցնելով են հայկական անունը թուրքական դարձրել: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի հայկական Ալիք գյուղանվան վերջին «ք» տառը վերացնելով՝ դարձրել են թուրքական Ալի անձնանվամբ գյուղանուն:

7) *Տեղանվան փոփոխությունն ածանցման կամ բառաբարդման եղանակով: Անվանափոխված տեղանուններում հանդիպում են նաև այնպիսիները, երբ հայկական տեղանվանը ավելացրել են թուրքական «չի», «լար» կամ տեղ արտահայտող «ի», «լու» վերջածանցներ: Օրինակ՝ տիպիկ հայկական Դուդուկ գյուղանվանը ավելացրել են թուրքական «չի» վերջածանցը և այն դարձրել Դուդուկչի, որ նշանակում է դուդուկ նվագող, կամ Շողանի կիրճը դարձրել են Շողանլու, իսկ հայոց ինքնության խորհրդանիշ դարձած Վարդան անձնանունը կրող տեղանունները աղավաղել են Վարդանլի կամ Վարդանլու ձևով: Արևմտյան Հայաստանի Երզրունի նահանգի Դերջան (Մամախաթուն) գավառակում, Մամախաթուն քաղաքից 20 կմ դեպի հարավ-արևմուտք, Եփրատ գետի ձախափնյա շրջանում գտնվող Վանքիկ գյուղանվանը ավելացնելով «լար» վերջածանցը՝ դարձրել են Վանքիկլար:*

8) *Նոր անվանադրում: Այն դեպքերում, երբ աշխարհագրական օբյեկտների անունները թարգմանելու կամ աղավաղելու որևէ տարբերակ չեն ունեցել, դրանց պարզապես տվել են նոր անուն: Այսպես՝ պատմական Փոքր Հայքի Կեսարիայի նահանգում գտնվող Սուրբ Բարսեղ լեռն անվանափոխել են Ալիդաղ, Հայկական պար լեռնաշղթան՝ Աղրիդաղ: Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Ապահունիք գավառում, ըստ ավանդության, Հայկ նահապետի որդի Մանավազի կողմից կառուցված պատմական Հայաստանի ամենամեծ ու ամառիկ բերդաքաղաքներից մեկը՝ Մանավազակերտը, որից և կրճատմամբ առաջացել է Մանազկերտ անունը, թուրքերը վերանվանել են Գարաճա, որ նշանակում է սևուկ, սևոտ: Հայաստանի Անի մայրաքաղաքից արևմուտք, Շիրակի սարահարթում գտնվող հնում Առճոռառիճ կամ Արջոռառիճ կոչվող լեռնաշղթան անվանափոխել են Ալաջա (ալ=գույնզգույն, խայտաբղետ), Վանա լճից արևելք գտնվող Արճակ լիճը թափվող Արճիչակ գետը՝ Մահմեդիկ, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում գտնվող Ծիրանյաց լեռները՝ Քիրեջլու (քիրեջ=կիր, լու=տեղ ցույց տվող վերջածանց): Վանի նահանգում, Վանա լճից հյուսիս գտնվող Բերկրի գյուղաքաղաքը անվանափոխել են Մուրադիտ: Կիլիկիայի Ջահան կամ Պիռամոս գետի վրա՝ Ընկուզեկ լեռան մոտ՝ Ջեթուն գյուղաքաղաքի մերձակայքում, հայոց եպիսկոպոսներից Հովհաննեսը կամուրջ է կառուցել, որն այդ պատճառով էլ կոչվել է Վարդապետի կամուրջ: Թուրքերն այն անվանափոխել են Համիդիտ: Մեծ և Փոքր Հայքերի սահմանում գտնվող Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայկական Ակն գյուղաքաղաքը վերանվանել են Քենալիտ: 1915 թ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ հայերն ամրանալով Կիլիկիայի Ջեթուն գյուղաքաղաքի Սբ. Աստվածածին վանքում, համառ ու հերոսական դիմադրություն են ցույց տվել թուրքերին, որի ընթացքում սպանվել է թուրք հարյուրապետ Սուլեյմանը, որի հիշատակին հետագայում Սուլեյմանիտ են վերափոխել հայկական Ջեթուն գյուղաքաղաքի անունը: Սասունում, Հայկական Տավրոս լեռնահամակարգի Ծովասար և Մարաթուկ լեռնագագաթների լանջերից սկիզբ առնող Տիգրիս գետի ձախակողմյան Սասնո ջուր վտակը անվանել են Բաթման, որ նշանակում է «թաղված, թաքնված»՝ գետի բավականին մեծ տարածության վրա գետնի տակով հոսելու պատճառով: Կիլիկիան և Կապադոկիան իրար հետ կապող Կիլիկյան Տավրոս*

լեռնաշղթայում գտնվող Կիլիկիայի կամ Տավրոսի դուռ կոչվող լեռնանցքը, որը 11-14-րդ դարերում հայտնի էր Գուգլակա կապան և այլ անուններով, դարձրել են Գյուլեք բողազ (գյուլեք=ծիծաղկոտ, բողազ=լեռնանցք, կոկորդ, կապան):

9) Այն բազմաթիվ դեպքերում, երբ թուրքերը չեն կարողացել թարգմանել հայկական պատմամշակութային հուշարձանների անունները, նրանք նույն կամայական ձևով դրանք պարզապես անվանափոխել են որևէ թուրքական անվամբ: Դրա ցայտուն օրինակն է Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառում, Մուշ քաղաքից հյուսիս-արևմուտք գտնվող և, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորչի կողմից 303 թվականին հիմնադրված Մշո Աբ. Կարապետ վանքը: Այն դարերի ընթացքում ունեցել է հայկական բազմաթիվ անուններ՝ Իննակնյա վանք, Գլակա վանք, Տարոնի վանք, Տարոնո Աբ. Կարապետ վանք և այլն, իսկ թուրքական տիրապետության շրջանում վերանվանվել է Ջիարեթ, որ նշանակում է ուխտատեղի և Չանգլի քիլիսե, որ նշանակում է զանգակավոր եկեղեցի:

10) Եկեղեցիների և վանքերի անվանափոխումների ժամանակ թուրքերը երբեմն էլ պարզապես դիմել են հաշվելու մեթոդին: Այսպես՝ նրանք հաշվել են վանական համալիրի մեջ մտնող եկեղեցիները և կամ եկեղեցու ունեցած խորանները ու դրանց քանակով վերանվանել վանքը կամ եկեղեցին: Այսպես՝ Արևմտյան Հայաստանի Վան քաղաքից արևելք, Վարազա լեռան լանջին գտնվող միջնադարյան Հայաստանի գրչության ու մշակութային կենտրոն Վարազավանքը, որն ուներ մատենադարան և որտեղ Խրիմյան Հայրիկը հիմնադրել էր տպարան, վանական համալիր էր՝ իր յոթ եկեղեցիներով, ուստի այդպես էլ վերանվանվել է Եդդիքիլիսե (եդդի=յոթ, քիլիսե=եկեղեցի): Պատմական Հայաստանի մեծ ու փառավոր կառույցներից մեկը՝ Աբ. Հովհաննեսի կամ Բագրևանդի վանքը, որ գտնվում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բագրևանդ գավառում, և հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, երեք խորան ունենալու համար վերանվանվել է Ուչքիլիսե (ուչ=երեք, քիլիսե=եկեղեցի):

Այսպիսով՝ 1915 թ. Թուրքիայի կազմակերպած Հայոց ցեղասպանությունից հետո, հայերի հետքերն Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայկական պետության տարածքից իսպառ վերացնելու նպատակով, թուրքերը սկսեցին հայկական բոլոր աշխարհագրական օբյեկտների անունները հիմնականում վերոգրյալ ձևերով ու մեթոդներով արագ անվանափոխել: Այդ անվանափոխությունները պետականորեն կարգավորված և հետևողականորեն իրականացվող գործընթաց է, որի հետևանքով հայկական տեղանունները Թուրքիայի Հանրապետությունում ներկայումս մեծ մասամբ վերացված են:

**ДЖУЛЬЕТА ЕСАЯН – Армянские топонимы и способы их переименования турками.** – Топонимы – часть историко-культурного наследия любой страны, в них содержатся многообразные исторические, географические, языковые сведения. Находясь в транзитной зоне между Западом и Востоком, Армения неоднократно подвергалась иноземным вторжениям, и её топонимы многократно изменялись. Особенно значительные переименования произошли в период турецкого

господства. Топонимы либо произвольно менялись, либо просто переводились на турецкий язык. В современной Турции переименование армянских топонимов имело регулярный характер и преследовало цель окончательно избавиться от исконных армянских наименований.

**JULIETA YESAYAN – *Armenian Place Names and the Ways of Renaming Them by the Turks.*** – In general, place names are considered to be a part of the given country's historical-cultural inheritance. They contain geographical, historical and linguistic data in themselves. Armenia, being situated in the West-East transit sector, has a number of times undergone invasions of foreign conquerors and Armenian place names have also been changed by them. They especially exceeded their limits during the period of Turkish power, when there were given arbitrary denominations to the Armenian place names, or they were just translated. Thus, renaming of Armenian place names were considered to be a standard process, during which there were applied all the above-mentioned ways in order to clean the Armenian cradle from Armenian place names.